ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 հուլիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

102
(2768)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՌԱՏՈՆԻՆ ԿՄԱՄՆԱԿՑԵՆ ԽՈՇՈՐՆԵՐՈՎ

Հուլիսի 22-23-ը Երեւանի Զաքյան փողոցում տեղի է ունենալու գարեջրի փառատոն, որի նպատակն է հանրությանը ներկայացնել հայկական գարեջրի տեսականին, առանձնահատկությունները, ավանդույթները եւ զարգացնել քաղաքային տուրիզմը, ինչպես նաեւ հայկական շուկայում գարեջրի արտադրությամբ զբաղվող ընկերություններին համախմբել մեկ հարթակում: Այս տարի, սակայն, համախմբվածության եւ գարեջրի տեսականու մասով խնդիրներ կան, կարծես թե:

«Ժողովուրդ» օրաթերթը ահազանգ ստացավ, որ կազմակերպիչները նախորդ փառատոնի մասնակիցներին զեղչեր են խոստացել, չեն արել, դրան գումարած՝ այս տարի երաշխիքային մոտ 200.000 դրամ գումար են պահանջել ընկերություններից, նաեւ այլ դժվարություններ են առաջացրել այս տարի՝ փոխելով մասնակցության պայմանները, ինչի արդյունքում շատ արտադրողներ չեն մասնակցի այս փառատոնին: Հավանաբար կլինեն մի քանի խոշոր ընկերություններ, որոնք ֆինանսական դժվարությունները կհաղթահարեն, իսկ մանր արտադրողների մեծ մասը, որոնք եւ գարեջրի բազմազանությունն են ապահովում, չեն մասնակցի:

Տեղեկացանք, որ փառատոնի կազմակերպման աշխատանքներով զբաղվում է «ԷվենտՏուրա» ընկերությունը: Գարեջրի համտեսը համեմելու համար ներգրավված կլինեն մինչեւ 20 ռեստորանային ընկերություններ եւ կներկայացնեն սնունդ, որը կարելի է համադրել գարեջրի հետ: Փորձեցինք կապվել «ԷվենտՏուրա» ընկերության հետ՝ճշտելու, թե ովքեր են մասնակցելու փառատոնին, ինչու են կազմակերպիչները փոքր արտադրողների համար արհեստական խոչընդոտներ ստեղծում, սակայն մեզ փոխանցեցին, որ մեզ հետ կապ կհաստատի տնօրենը, սակայն այդպես էլ որեւէ մեկը մեզ հետ կապի դուրս չեկավ մինչեւ օրվա ավարտը:

ArmLur.am-ը Երեւանի քաղաքապետարանի մամուլի պատասխանատու Հայկ Կոստանյանից փորձեց տեղեկանալ, թե ինչ խնդիրներ կան, որ ընկերություններն են մասնակցելու փառատոնին: Կոստանյանը պատասխանեց, որ, որպես կանոն, մինչեւ վերջին օրն էլ մասնակիցները փոփոխվում են, եւ իրենք հստակ չեն կարող ասել, թե ովքեր կլինեն:

Միայն պարզ է, որ փառատոնի համար Զաքյան փողոցը տրամադրվելու է անվճար հիմունքներով: Այսինքն՝ծախսն ավելի քիչ է, քան կարելի էր պատկերացնել:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց նաեւ նախկինում փառատոնին մասնակցած գարեջրի փոքր արտադրությունների ներկայացուցիչների հետ՝ճշտելու, թե արդյոք պատրաստվում են այս տարի եւս մասնակցել: «Ալավերդի», «Կելլերս» եւ «Թովմաս» ընկերութուններից մեզ պատասխանեցին, որ այս տարի չեն պատրաստվում մասնակցել փառատոնին:

Մի խոսքով, խուլ դժգոհություն է հասունանում՝ փառատոնին ընդառաջ:

Կառավարության երեկվա նիստում վերջնականապես հաստատվեց, որ Երեւանի ավագանու հերթական ընտրությունը կկայանա սեպտեմբերի 17-ին: Այսպիսով, հերթական ընտրությունների քարոզարշավը մեկնարկելու է օգոստոսի 23-ից: Հայտնի է, որ այս քարոզարշավին լծվելու է ՔՊ ողջ կազմը, եւ խմբակցության պատգամավորներին եւս «բերման են ենթարկելու»՝դրան մասնակցելու եւ իրենց թեկնածուի քարոզն անելու համար: Այսպիսով, այս պահի դրությամբ խորհրդարանական ընդդիմադիր ուժերը դեռ չեն հայտարարել ընտրություններին մասնակցելու որոշման մասին: «Ապրելու երկիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն Մանե Թանդիլյանն է, «Լուսավոր Հայաստան» կուսակցության ցուցակը կգլխավորի Դավիթ Խաժակյանը: Ընտրություններին մասնակցելու մասին հայտարարել են նաեւ գործարար Տիգրան Արզաքանցյանի կինը՝Նատալյա Ռոտենբերգը, երգահան Ռուբեն Հախվերդյանը, փաստաբան Նորայր Նորիկյանը, Կենտրոն վարչական շրջանի նախկին ղեկավար, ուրբանիստ Վիկտոր Մնացականյանը: Հավելենք, որ Երեւանի ավագանու վերջին ընտրությունները տեղի են ունեցել 2018-ի սեպտեմբերի 23-ին, ավագանին իր լիազորությունները ստանձնել է 2018-ի հոկտեմբերի 10-ին. այդ լիազորությունների ժամկետը լրանում է այս տարվա հոկտեմբերի 10-ին: Օրենքի դրույթներից ելնելով՝ Երեւանի ավագանու հերթական ընտրությունները նշանակվեցին սեպտեմբերի 17-ին:

Դատական համակարգը հայտնվել է բարդ իրավիճակում: Դատավորները քննարկում են այն իրավիճակը, որ չկա որեւէ ընթացակարգ, որը հիմք ընդունելով՝դատարանը թույլ տա ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին ԱԱԾ մեկուսարանից հանել եւ տանել Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին մասնակցելու: Ավելին, դատական համակարգում առաջ են քաշել այն հարցը, որ սովորաբար կալանավորին թույլ են տալիս դուրս գալ բանտից, երբ հարազատ մարդ է մահանում, կամ որեւէ քրեական գործով կալանավորին կանչում են հարցաքննության, քրեական վարույթով հույժ կարեւոր ցուցմունք տալու: Հիմա փաստացի ստեղծվել է մի իրավիճակ, որ Դավիթ Տոնոյանը միջնորդել է թույլ տալ իրեն մասնակցել քննիչ հանձնաժողովի նիստին, որի մասով չկա որեւէ ընթացակարգ, ուստի դատական համակարգը հայտնվել է բարդ իրավիճակում եւ չգիտի, թե ինչպես այս հարցին մոտենալ: Դատահիրավական համակարգը կարծում է, որ, ամենայն հավանականությամբ, Դավիթ Տոնոյանի գործը քննող դատավոր Վահե Դոլմազյանը միգուցե մերժի միջնորդությունը, սակայն դեռեւս վերջնական որոշում չկա. հուլիսի 25-ին պարզ կդառնա՝Տոնոյանին կմերժեն, թե ոչ: Հիշեցնենք, որ ԱԺ-ն հուլիսի 16-ին արձակուրդ է մեկնում: Անդրանիկ Քոչարյանը վստահեցրել է նաեւ, որ Տոնոյանին հնարավորություն են տալու ընտրել՝հանձնաժողովում հանդես գալ փակ ռեժիմով, թե ուղիղ եթերով, ինչպես արեցին վարչապետ Փաշինյանի դեպքում: Քոչարյանը հույս ունի, որ դատարանը դրական որոշում կկայացնի: Հիշեցնենք, որ մեկուկես տարուց ավելի բանտում գտնվող Դավիթ Տոնոյանը որոշել է բացատրություններ տալ՝արձագանքելով Նիկոլ Փաշինյանի եւ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանի հայտարարություններին: «Ունենալով առանցքային դերակատարում պատերազմի ղեկավարման ժամանակ՝շատ ասելիք ունեմ հանձնաժողովին»,- հայտարարել էր նա:



Թալին խոշորացված համայնքի Արագածավան գյուղի ՔՊ-ական ՋՕԸ պետ Սուրեն Թորոսյանի միջադեպի գործով նախաքննական մարմինը լռում է: Մեզ հասած լուրերի համաձայն՝իրավապահները փորձում են գործը փակուղի տանել եւ կարճել, ինչպես անում է նախաքննական մարմինը ՔՊ-ական շատ պաշտոնյաների եւ նրանց հարազատների մասնակցությամբ միջադեպերի գործով: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտե, որտեղից, ի պատասխան, հայտնեցին, որ գործով նախաքննությունը շարունակվում է: Հիշեցնենք, որ 2023թ. հունիսի 7-ին ոստիկանության Թալինի բաժնում հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ժամը 19.00-ի սահմաններում, Արագածավան բնակավայրում գտնվող ավտոմեքենաների լվացման կետի մոտ ծագած վիճաբանության ընթացքում բնակավայրի բնակիչ, ՔՊ-ական Սուրեն Թորոսյանը գազաբալոնով գազ է փչել նույն բնակավայրի բնակիչ, 24-ամյա Ա.Ս.-ի դեմքին, փայտով հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝պատճառելով մարմնական վնասվածք: Վերջինս ստացել է ամբուլատոր բուժօգնություն: Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության Թալինի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: 2023թ. հունիսի 8-ին՝ժամը 00.15-ին, Ս. Թ.-ն ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացվել է Թալինի քննչական բաժին: Որոշում է կայացվել հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով վերջինիս ձերբակալելու մասին: Ա. Ս.-ն ճանաչվել է տուժող, որից հետո նախաքննական մարմինը Թորոսյանին ազատ էր արձակել ու մեղադրանք առաջադրել: Դեպքից անցել է մեկ ամիս, ու մինչ օրս հայտնի չէ, թե ինչ է սպասվում այս գործով ՔՊ-ական Սուրեն Թորոսյանին: Փաստ է, որ նա արցախցի անչափահասին իջեցրել էր ավտոմեքենայից, թողել էր ամայի փողոցի վրա, այսօր շարունակում է մնալ իր պաշտոնին: Հուսանք՝այս միջադեպը չի արժանանա ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի մասնակցությամբ միջադեպի գործի ճակատագրին: Վերջինս քաղաքացու կարտոֆիլը ոտքով հրել էր ու փողոցով մեկ շաղ տվել, ու պատգամավորի խուլիգանական վարքը քննության առարկա չդարձավ: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մեկ այլ պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդին՝ Շանթ Բագրատյանը, ծեծկռտուքի մասնակից էր եղել, բայց նախաքննական մարմինը գործը կարճեց: Մյուս ՔՊ-ականների մասին՝հաջորդիվ:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ԱՐՑԱԽՈՒՄ

«Այս պահին ստման գծում իրադրությունը հարաբերականորեն կայուն է, կրակոցներ չկան»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական, հատուկ հանձնարարություններով գծով ներկայացուցիչ, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը:

-Ի՞նչ է կատարվում Արցախում այժմ:

-Որեւէ էական փոփոխություն չկա, Արցախը մնում է պաշարված, օրեցօր բարդանում են կենցաղային պայմանները. սա է, ուրիշ նորություններ չկան: Ամեն ինչ գնալով վատթարանում է: Ադրբեջանն իր քաղաքականությունն է շարունակում, մենք տեսնում ենք նաեւ աշխարհաքաղաքական փոփոխություններ՝ լուրջ: Թուրքիան է արդեն բացում իր խաղաքարտերը, մի բան, որ պետք էր կանխատեսել եւ, իհարկե, կանխատեսվում էր մեր կողմից, բայց ունենք այն, ինչ ունենք, ինչպես ասում են:

-Լավ, ո՞րն է այս ամենի նպատակը, ինչքա՞ն է այսպես շարունակվելու, ո՞րն է, ըստ Ձեզ, այս ամենի լուծումը:

-Կարծում եմ՝ նպատակը բոլորիս համար պարզ է՝ Արցախը հայաթափել ու տեր կանգնել այդ տարածքին, եւ, իրենց պատկերացմամբ, ինչքան շուտ, այնքան լավ:

-Իսկ հումանիտար վիճակի մասին ի՞նչ կասեք:

-Իրավիճակը այդ առումով եւս վատ է, ոչինչ չի փոխվել, եւ նույնիսկ ավելի վատն է ամեն ինչ գնացել, խանութները դատարկվում են օրեցօր, եւ գնալով ավելի դժվար է դառնում կենսական անհրաժեշտության իրեր գտնելը: Մթերքների լուրջ պակաս կա. սա մեծ խնդիր է: Հացի խնդիր կա 21-րդ դարում:

-Պարոն Բաբայան, ասում են, որ միրգ-բանջարեղեն կա Արցախում աճեցվող, սակայն շատ թանկ է. դա ինչի՞ հետ է կապված:

-Դա կապված է մի քանի հանգամանքով. արոտավայրերն են կրճատվել, գյուղատնտեսական հողերն են կրճատվել: Սա խնդիր է, չէ՞:Ամեն տիպի բարդություններ էլ կան: Գնում են աշխատանքի մարդիկ, շարունակում են ապրել իհարկե, փորձում են տեղում չդոփել, բայց, իհարկե, դա տեղի չի ունենում այնպես, ինչպես նախկինում էր, քանի որ խնդիրները շատ մեծ են, հեռավորության խնդիրներ կան, հովհարային անջատումն է խնդիրներ առաջացնում եւ այսպես շարունակ: Տրանսպորտային ցանցը եւս շատ վատ է աշխատում, մայրաքաղաքում մի քանի երթուղի է աշխատում, մարդիկ խցկված են երթեւեկում. չեք կարող պատկերացնել, թե ինչ է տեղի ունենում: Հիմնականում մարդիկ ոտքով են հասնում իրենց ուզած տեղերը:

-Իսկ միջմարզային կապերն ինչպե՞ս են:

-Դա եւս վատ վիճակում է: Ընդհանուր առմամբ, եւս մեկ անգամ եմ ասում՝ որեւէ դրական փոփոխություն չկա, պարզապես փորձում ենք ապրել:

-Իսկ տարածվող ապատեղեկատվությունների մասին ի՞նչ կասեք:

-Դա, իհարկե, ծրագրի մի մասն է: Նույն նպատակն է հետապնդում, այն է՝ հոգեբանական առումով ճնշել: Մենք անընդհատ կարող ենք դիմել դրսի կառույցներին, բայց ինձ համար կարեւոր է, ես այդպես եմ կարծում, որ մենք չպետք է փոշիացնենք մեր ռեսուրսները. հասկանանք իրավիճակը, հասկանանք՝ ով է ի վիճակի, ով՝ չէ, ով է շահագրգռված, ու հենց նրանց հետ աշխատենք:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ⇨ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆԸ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 7-րդ գումարման պատգամավոր Արթուր Հարությունյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադարձել է ՀՀ ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորությունների դադարեցմանը:

«Անկեղծ ասած, չեն հասկանում՝ դա ինչ որոշում է, եւ ինչու է նման որոշում կայացվել: Մենք միշտ էլ բարձր ենք գնահատել Թագուհի Թովմասյանի աշխատանքը այդ պաշտոնում, եւ իր կողմից մշտապես բարձրացվել են Արցախի հակամարտության կարգավորման, մարդու իրավունքների եւ այլ խնդիրների առնչվող հարցեր: Առհասարակ, նրա կատարած աշխատանքը շատ բարձր եմ գնահատում, եւ այս որոշումը ինձ համար անհասկանալի էր:

Իր կատարած աշխատանքը, գործունեությունը ուուսմնասիրելով՝ չեմ կարծում, որ որեւէ հարցում թերացել է, որի պատճառով կարող էին դադարեցվել լիազորությունները: Իմ կարծիքով՝ Թովմասյանը իր աշխատանքը կատարել է բարձր մակարդակով:

Ես ինչքան տեղյակ եմ, «Ազգային ժողովի կանոնակարգ»-ով, հանձնաժողովներում նախագահների նշանակումը պետք է լինի Դոնթի բանաձեւով, բայց թե ինչ է կատարվում Հայաստանի խորհրդարանում եւ ինչու, չեմ կարող ասել»- ասաց Հարությունյանը:

Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՎԱՐՏՎԵՑ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Ազգային ժողովը հուլիսի 13-ին երկրորդ ընթերցմամբ քննարկել եւ ընդունել է Կառավարության հեղինակած ««Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, ինչպես նաեւ ««Ջենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» եւ ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենսդրական փաթեթը: Առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո օրենսդրական նախաձեռնությունները բովանդակային փոփոխության չէին ենթարկվել:

Գլխադասային հանձնաժողովների եզրակացությունները դրական էին:

Սպառելով օրակարգը՝ խորհրդարանն ավարտել է արտահերթ նստաշրջանի աշխատանքը:

ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐԱՌՈՒՄԸ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը թվիթերյան միկրոբլոգում գրառում է արել Արցախում բնակվող երկու երեխայի՝ 3-ամյա Լեոյի եւ 6-ամյա Գիտայի մահվան վերաբերյալ՝ ընդգծելով, որ կատարվածն Արցախի շրջափակման հետեւանք է:

«Լաչինի միջանցքի 7-ամսյա արգելափակումն ու Լեռնային Ղարաբաղի ամբողջական շրջափակումն անդառնալի եւ կործանարար ազդեցություն է թողնում մարդկանց կյանքի վրա: Լեռնային Ղարաբաղի բնակիչներ 3-ամյա Լեոյի եւ 6-ամյա Գիտայի մահը լուրջ մարդասիրական իրավիճակի հետեւանք է: 21-րդ դարն է: Սա չպետք է հանդուժվի», - գրել է Միրզոյանը՝ կից հրապարակելով երեխաների լուսանկարներ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Արցախի պետնախարար Գուրգեն Ներսիսյանը սոցցանցով տեղեկացրել է. «Սիրելի՛ հայրենակիցներ, Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդին պատանդառելու եւ Հայաստանի հետ կապող ճանապարհը արգելափակելու հետեւանքով հումանիտար իրավիճակն Արցախում օր օրի վատանում է, իսկ այսպես շարունակվելու դեպքում ունենալու ենք ծանր ու անդառնալի հետեւանքներ, որը մենք թույլ տալ չենք կարող, ուստի վաղվանից սկսում ենք համաժողովրդական անժամկետ շարժում:

ԳՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Հունիսին Վրաստանում օտարերկրյա զբոսաշրջային ծառայությունների գներն աճել են 8,8 տոկոսով. գրում է BusinessPressNews-ը՝ վկայակոչելով ՌԴ պետական վիճակագրական դաշնային ծառայությանը («Ռոսստատ») (հաղորդում է Aliq Media-ն):

Ըստ տեղեկության՝ «Ռոսստատ»-ն առանձին է նշել Վրաստանից չվերահսկվող Աբխազիայի ցուցանիշը, որտեղ եւս զբոսաշրջային ծառայությունների գներն աճել են 8,8 տոկոսով:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻՆ

Նիդերլանդների հայկական կազմակերպությունների ֆեդերացիան տեղեկացնում է, որ ԱԳ նախարար Վոպկե Հուքստրան խորհրդարանին հղված նամակում մանրամասներ է հայտնել հունիսի 26-ին կայացած ԵՄ ԱԳ նախարարների խորհրդի նիստից, որտեղ նաեւ քննարկվել է Լաչինի միջանցքի շրջափակումը եւ Արցախում խորացող հումանիտար ճգնաժամը:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիայի տարածած հաղորդագրությունից, ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելը տեղեկացրել է ԵՄ երկրների արտգործնախարարներին, որ Ադրբեջանն ամբողջովին արգելափակել է Լաչինի միջանցքը, ինչը սպառնում է խորացնել Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամը:

Ըստ ԱԳ նախարարի՝ ինքը Նիդերլանդների անունից խորը մտահոգություն է հայտնել շրջափակման կապակցությամբ եւ կոչ արել ԵՄ-ին շարունակել բանակցությունները Ադրբեջանի հետ՝ իրականացնելու Արդարադատության միջազգային դատարանի որոշումը եւ ապահովելու մարդկանց եւ ապրանքների ազատ տեղաշարժը միջանցքով:

Ժոզեպ Բորելն ընդգծել է, որ կոչ է արել Ադրբեջանին՝ վերացնելու շրջափակումը: ԵՄ խորհրդի նախագահը հուլիսին նախատեսում է բանակցել Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ:

ԵՄ անդամ բոլոր երկրները միահամուռ աջակցություն են հայտնել ԵՄ խորհրդի նախագահին՝ խաղաղության համաձայնագրի հասնելու իր ջանքերում:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բրյուսելում հուլիսի 15-ին նախատեսված է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի՝ եռակողմ ձեւաչափով հանդիպումը: Կառավարության նիստի ժամանակ այս մասին հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Հուլիսի 15-ին Բրյուսելում նախատեսված է իմ հանդիպումը Եվրամիության խորհրդի նախագահի եւ Ադրբեջանի նախագահի հետ: Ես հաստատել եմ իմ մասնակցությունը այդ հանդիպմանը: Հույս ունեմ այդ հանդիպման ընթացքում առաջընթաց արձանագրել խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններում»,- ասաց Փաշինյանը:

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ տեղի է ունեցել Կառավարության հերթական նիստը: Նիստի սկզբում վարչապետ Փաշինյանն անդրադարձել է Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի որոշմանը եւ այլ հարցերի: Մասնավորապես, վարչապետը նշել է, որ Արդարադատության միջազգային դատարանը նախորդ շաբաթ կարեւոր որոշում է կայացրել Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության դիմումի հիման վրա՝ դատարանը վերահաստատել է սույն թվականի փետրվարի 22-ին կայացրած իրավական պարտադիր ուժ ունեցող որոշումը, որով Ադրբեջանին պարտավորեցրել է ձեռնարկել իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցները՝ ապահովելու Լաչինի միջանցքով անձանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անխափան տեղաշարժը երկու ուղղություններով: Նման որոշմամբ դատարանը, փաստորեն, արձանագրել է, որ Ադրբեջանը չի կատարել սույն թվականի փետրվարի 22-ի որոշումը, հակառակ դեպքում այդ նախորդ որոշումը վերահաստատելու անհրաժեշտություն չէր առաջանա:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ դա կարեւոր նրբություն է.

«Հուլիսի 6-ի որոշման 28-րդ կետում դատարանը, հիշատակելով հայկական կողմից իրեն փոխանցված տեղեկատվությունը, որ այսպես կոչված բնապահպանների ակցիա այլեւս տեղի չի ունենում, բայց հիմա էլ Լաչինի միջանցքով տեղաշարժն ընդհատված է Ադրբեջանի կողմից անցակետի տեղադրման պատճառով, արձանագրել է, որ հարցի էությունը սրանից չի փոխվում, որովհետեւ Լաչինի միջանցքով տեղաշարժի ընդհատման հետեւանքները Լեռնային Ղարաբաղի հայերի համար նույնն են, ինչ 2022թ. փետրվարին, հետեւաբար դատարանի մոտեցումը եւ իրավական պարտադիր ուժ ունեցող որոշումը նույնպես մնում են նույնը:

Այնուամենայնիվ, դատարանի փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի նույնաբովանդակ որոշումների մեջ որոշակի նյուանսային տարբերություններ կան, որովհետեւ եթե փետրվարին Ադրբեջանի կառավարությունն ասում էր, թե բնապահպանական ակցիան իր կողմից չի կազմակերպվել, եւ դա քաղաքացիական հասարակության ինքնաբուխ գործողություն է, հիմա նման բան ասելու հնարավորություն չունի, որովհետեւ հիմա արդեն Լաչինի միջանցքն արգելափակված է Ադրբեջանի բացառապես պետական կառույցների գործողությունների պատճառով: Եվ հետեւաբար, Արդարադատության միջազգային դատարանի որոշմամբ վերահաստատվումն էլ ավելի է ամրապնդում Ադրբեջանի կառավարության պատասխանատվությունը Լեռնային Ղարաբաղում խորացող հումանիտար ճգնաժամի համար»,-ասել է նա:

Փաշինյանի խոսքով՝ Ադրբեջանի «բնապահպանական» ակտիվությունն, այնուամենայնիվ, շարունակվում է, եւ հիմա էլ այդ երկիրը փորձում է Հայաստանին բնապահպանական բնույթի մեղադրանքներ ներկայացնել պաշտոնական եւ ոչ պաշտոնական մակարդակով: Ընդ որում, սրա համար Ադրբեջանը Հայաստանին վերագրում է հանքավայրեր, որոնք պարզապես գոյություն չունեն, բարձրաձայնում է հանգամանքներ, որոնք մտացածին են, մատնանշում է որոշումներ, որոնք բոլորովին ուրիշ բանի մասին են, հիշատակում է կոնվենցիաներ, որոնք վերաբերելի չեն:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԱՔՍԱԿԵՏՈՒՄ

«Մարգարա» մաքսակետի 1-ին փուլի շինարարական ու մոնտաժային աշխատանքները մեկնարկել են: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Կառավարության համապատասխան որոշումից:

«Մաքսակետի կառուցման կապալառու «Արտկոն» ՓԲԸ-ին մաքսակետի կառուցման 1-ին փուլի շինարարական եւ մոնտաժային աշխատանքների իրականացման համար արդեն վճարվել է 140.4 մլն դրամ: Մաքսակետի կառուցման 2-րդ փուլի նախագծանախահաշվային փաստաթղթերը ենթարկվել են պարզեցված փորձաքննության եւ ստացել դրական եզրակացություն: Պայմանագրով սահմանված գումարի մնացած մասը՝ 110.2 մլն դրամը, փոխանցվելու է կապալառուին՝ առնվազն երեք մոդուլային տաղավարների երկաթբետոնե հիմքերի սալերի աշխատանքների իրականացման պայմանով: Մաքսակետի գործարկման համար սահմանված սեղմ ժամկետներով եւ դրա իրականացման գործընթացին առնչվող ոչ ստանդարտ մոտեցումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել գլխավոր կապալառու «Արտկոն» ՓԲԸ-ին տրամադրել գումար՝ 20.06.2023թ. կնքված թիվ ՊԵԿ-ՀՄԱ-ԱԾՁԲ-23/2 պայմանագրի գնի քառասունչորս տոկոսի չափով՝ առնվազն երեք մոդուլային տաղավարների երկաթբետոնե հիմքերի սալերի աշխատանքների իրականացման պայմանով», - ասված է որոշման մեջ:

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ ԼՈՒԾԱՐՎԵՑ

Կառավարությունն իր հունիսի 13-ի նիստում որոշում ընդունեց, որով լուծարեց Ստեփանավանի արտակարգ իրավիճակների օդանավակայանը:

Որոշման նախագծում նշված է, որ դրա անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության օդանավակայանների վերագործարկման եւ Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի եւ հայաստանյան օդանավակայանների զարգացման հեռանկարով:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԳ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գերմանիայի արտաքին գործերի պետնախարար Թոբիաս Լինդները կայցելի Հայաստան: Այս մասին հայտարարել է Ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանը՝ ԱԺ-ում «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ՍՊԸ-ի եւ վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KFW) տեղական գրասենյակներ հիմնելու վերաբերյալ» հայտագրերի փոխանակման ձեւով կնքված համաձայնագիրը վավերացնելու մասին հարցի քննարկման ժամանակ:

Նա ընդգծել է, որ հայ-գերմանական համագործակցության օրակարգը վերջին ժամանակահատվածում հատկապես ակտիվացել է:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ

ԱԱԾ-ԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի կալանքի հարցը ՀՀ վերաքննիչ դատարանում քննող դատավոր Արթուր Նահապետյանը ինքնաբացարկ է հայտնել: Բանն այն է, որ Դավիթ Տոնոյանի պաշտպանները նրա կալանքի հարցով բողոք են ներկայացրել ՀՀ վերաքննիչ դատարան, որը մակագրվել է դատավոր Արթուր Նահապետյանին:

Նկատենք, որ Նահապետյանը մինչ դատավոր դառնալը՝ 2020 թվականի հունիսից հոկտեմբեր ամիսներին, աշխատել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի՝ հատուկ քննչական ծառայողների՝ իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաեւ կոռուպցիոն, կազմակերպված եւ պաշտոնական հանցագործությունների գործերով քննության բաժնի պետ: Արդյունքում Դավիթ Տոնոյանի պաշտպանները միջնորդություն են ներկայացրել դատարան, որպեսզի դատավոր Նահապետյանը ինքնաբացարկ հայտնի, քանի որ Դավիթ Տոնոյանի գործը քննվել է ԱԱԾ-ում, իսկ այդ ժամանակահատվածում Նահապետյանը պաշտոնատար անձ է եղել, ուստի օբյեկտիվ քննություն չի կատարվի, եւ դատավորը պետք է ինքնաբացարկ հայտնի:

Մեզ հայտնի դարձավ, որ ԱԱԾ-ական դատավոր Նահապետյանը ինքնաբացարկ է հայտնել, ասել է թե՝ դատավոր Արթուր Նահապետյանը հրաժարվել է քննել Դավիթ Տոնոյանի կալանքի հարցը:

Հիշեցնենք, որ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի գործը Հակակոռուպցիոն դատարանում մտնում է առավել աղմկահարույց փուլ: Բանն այն է, որ գործով դատարան է հրավիրվելու վերջին վկան՝ ՀՀ ԶՈՒ ավիացիայի պետ-վարչության նախկին պետ Գագիկ Ասլանյանը, որից հետո սկսվում է մեղադրյալների հարցաքննության փուլը: Խոսքը հասնում է ՊՆ նախկին պաշտոնյաներին՝ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, Գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Ավետիք Մուրադյանին, գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին: Հիշեցնենք, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին: Քրեական գործով այս պահին «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում՝ «ԿԳԲ-ի պադվալում» են գտնվում ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը, իսկ մյուս մեղադրյալները ազատության մեջ են: Գործը Հակակոռուպցիոն դատարանում քննվում է դռնփակ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵՄԶԱՇԵՆԻ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ քննչական կոմիտեն միջնորդություն է ներկայացրել դատարան՝Պեմզաշենում կատարված մոր եւ երեխաների դաժան սպանության վարույթով 2 մեղադրյալների կալանքի ժամկետը եւս 2 ամսով երկարաձգելու վերաբերյալ, որը դատարանի որոշմամբ բավարարվել է:

Ավելին՝ այս գործով նշանակված են փորձաքննություններ, որոնց եզրակացությունների մի մասը, ինչպես տեղեկացնում են Կոմիտեից, դեռեւս չի ստացվել: Նկատենք, որ նշանակված փորձաքննությունների եզրակացությունները առանցքային նշանակություն են ունենալու մեղադրյալների արարքներին վերջնական իրավական գնահատական տալու համար:

Հիշեցնենք՝նոյեմբերի 9-ին արտակարգ ու ողբերգական դեպք էր տեղի ունեցել Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի Պեմզաշեն գյուղի տներից մեկում: Տան բնակիչները չէին արձագանքել դռան թակոցներին. իրավապահների ներկայությամբ դուռը բացելուց հետո հատակին 3 դի էր հայտնաբերվել:

Պարզվել էր, որ նրանց սպանել էին, եւ ավելի ուշ կալանավորվեցին նույն գյուղի բնակիչներ Արկադ եւ Վրույր Բարսեղյանները: Ըստ տեղեկությունների՝ Արկադի եւ Վրույր Բարսեղյանները մտել են սպանվածների տուն գողության նպատակով, կապկպել են բնակիչներին, նրանից մեկը՝ Արկադին, թողել հեռացել է, իսկ Վրույր Բարսեղյանը, որը նշվում է, որ ունի հոգեկան խնդիրներ, չի հեռացել, բռնաբարել է աղջիկ երեխային, որից հետո սպանել է մորն ու վերջինիս զավակներին: Գործով նախաքննությունը շարունակվում է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԹԱՐ

Հուլիսի 13-ին ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 13:50-ի սահմաններում Ավան վարչական շրջանում՝Մարշալ Բաբաջանյան եւ Ալմա Աթի փողոցների խաչմերուկում, բախվել են Toyota մակնիշի, ՊՆ 102 համարանիշի եւ վրացական համարանիշներով Hyundai մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի հետեւանքով, բարեբախտաբար, տուժածներ չկան:

Լուսանկարը՝Գագիկ Շամշյանի

Վթարի փաստով ՊԾ Երեւան քաղաքի գնդում նյութեր են նախապատրաստվում:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Toyota-ն հաշվառված է ՀՀ ՊՆ հաշվեկշռում եւ սպասարկում է ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին: Այդ ավտոմեքենայով շրջում են Ս. Պապիկյանի անվտանգության աշխատակիցները:

Պարեկային ծառայությունը պարզում է վարորդների ինքնությունը:

ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆՆ ՈՒ ՀԱՓԾՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականի հունիսի 29-ին դատախազի նախաձեռնությամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել 2016 թվականի ընթացքում «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի գիտության գծով տեղակալի, իսկ 2017 թվականի մայիսի 10-ից՝տնօրենի պաշտոնը զբաղեցրած Վ.Գ.-ի նկատմամբ՝ յուրացնելու, պաշտոնեական կեղծիք կատարելու, խարդախության եւ փողերի լվացման համար:

Այս մասին հայտնում են դատախազության հանրային կապերի բաժնից:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Վ.Գ.-ն 2016-2017 թվականների ընթացքում ՊՈԱԿ-ի եւ «Շրջակա միջավայրի եւ բնական ռեսուրսների գիտահետազոտական ինստիտուտ» ՍՊԸ-ի միջեւ կնքված գնման պայմանագրի շրջանակներում կազմել է կեղծ հանձնման-ընդունման արձանագրություն, ակտ, ինչպես նաեւ օգտագործելով իր ծառայողական լիազորությունները՝ մի խումբ անձանց օժանդակությամբ վատնման եղանակով ՊՈԱԿ-ից կատարել է 3 մլն 683 հազար դրամի հափշտակություն:

Բացի այդ, ՊՈԱԿ-ի եւ «Կարեն Աղաբաբյան էռնեստի» Ա/Ձ-ի միջեւ 2017 թվականի հուլիսի 11-ին կնքված գնման պայմանագրի շրջանակներում Վ.Գ.-ն, մի խումբ անձանց օժանդակությամբ, վատնման եղանակով ՊՈԱԿ-ից հափշտակել է 3 մլն դրամ:

Վերը նշվածից բացի, Վ.Գ.-ն, ՊՈԱԿ-ի եւ Բնապահպանության նախարարության միջեւ 2017 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված՝ պետության կողմից դրամաշնորհի ձեւով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի շրջանակներում կազմել է կեղծ հաշվետվություններ եւ խարդախությամբ հափշտակել 20 մլն 969 հազար դրամ, այնուհետեւ իրականացրել հանցավոր ծագում ունեցող առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում:

2023 թվականի հուլիսի 10-ին հսկող դատախազը միջնորդություն է ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ Վ.Գ.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին: 2023 թվականի հուլիսի 11-ին դատարանը, մասնակի բավարարելով միջնորդությունը, Վ.Գ.-ի նկատմամբ կիրառել է այլընտրանքային խափանման համակցված միջոցներ՝ վարչական հսկողություն եւ գրավ՝ 10 մլն դրամի չափով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 64 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԶՈՐԱԿՈՉՎԵԼՈՒ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Դիլիջանի բնակիչ, 1998թ. ծնված, միջնակարգ կրթությամբ Իվան Միխաիլովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2014 թվականի մարտի 3-ին կցագրվելով զինկոմիսարիատում եւ կանգնելով զինվորական հաշվառման, 2018թ. ամառային զորակոչին ներկայացել է Դիլիջանի զինկոմիսարիատ, անցել բժշկական հետազոտություններ եւ, կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, որից հետո, պարտավոր լինելով 2018թ. ամառային զորակոչին ներկայանալ Դիլիջանի զինկոմիսարիատ, զորակոչվել ՀՀ զինված ուժեր, չի ներկայացել, խուսափել է զինվորական ծառայությունից: Իվան Միխաիլովին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327 հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Միխաիլովը 2014թ. մարտի 3-ին Դիլիջան քաղաքի զինկոմիսարիատի կողմից անցել է բժշկական համապատասխան հետազոտություններ, ստացել է 10 ամիս 5 ամիս ժամանակով տարկետումներ: 2018թ. մայիսի 16-ին Իվան Միխաիլովը հերթական անգամ ներկայացել է Դիլիջանի զինկոմիսարիատ, անցել սահմանված բժշկական հետազոտություններ, նրա մոտ ախտորոշվել է սրտի ռիթմի խանգարում:

2018թ. հուլիսի 14-ին Միխաիլովը այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել, որը մերժվել է: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում նա հրաժարվել է ցուցմունք տալուց: Նախաքննության ընթացքում որպես մեղադրյալ հարցաքննվելիս ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը չի խուսափում զինվորական ծառայությունից, այլ խնդրում է, որպեսզի իրեն տրամադրվի այլընտրանքային զինվորական ծառայության հնարավորություն՝ գիտակցելով, որ այդ դեպքում 2 տարվա փոխարեն ծառայելու է 3 տարի, իր այդ դիրքորոշումը պայմանավորված է կրոնական հավատալիքներով. ինքը իրավունք չունի զենք վերցնել, մարդ սպանել, բացի Աստծո առաջ, այլ անձանց կամ պետության առաջ երդում տալ, հետեւաբար իսկական զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում պարտավոր է երդում տալ պետության առաջ, կրել զենք, որոնք հակասում են իրեն՝ որպես մոլոկանի՝ քրիստոնյա-բողոքականի կրոնական հավատալիքներին:

2019թ. նոյեմբերի 11-ին Իջեւանում Տավուշի մարզի առաջին ատյանի դատավոր Սամվել Մարդանյանը վճռել է Իվան Միխաիլովին մեղավոր ճանաչել առաջադրված մեղադրանքում, նրան դատապարտել 2 տարի ժամկետով ազատազրկման: 2021թ. փետրվարի 11-ին վերաքննիչ դատարանը մերժել է Միխաիլովի պաշտպանի վերաքննիչ բողոքը. 2023թ. ապրիլի 5-ին վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի՝2021 թվականի նոյեմբերի 11-ի դատավճիռը եւ վերաքննիչ քրեական դատարանի 2021թ. փետրվարի 11-ի որոշումը եւ գործն ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝նոր քննության:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄՈԴԵԼ

ՀՀ կառավարությունը հունիսի 13-ի նիստում հավանության է արժանացրել թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման փորձնական մոդելի ներդրման ծրագիրը հաստատելու մասին նախագիծը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը: Նրա խոսքով՝ Կառավարության ծրագրով մշակույթը եւս կարեւոր առաջնահերթություն է, որն առաջին հերթին հանրության կրթական մակարդակի շարունակական բարձրացման, մարդկային կապիտալի զարգացման հարթակ է եւ իր ուղիղ ազդեցությունն է ունենում քաղաքացիների հանրային, այդ թվում՝ քաղաքացիական եւ քաղաքական հարաբերությունների որակի վրա: «Կառավարության ծրագրով նախատեսված գործողություններից մեկն այն է, որ մշակութային հաստատությունները, պետական բյուջեից ստանալով ֆինանսավորում, պետք է հոգ տանեն նաեւ սեփական եկամուտների ավելացման ուղղությամբ: Այս չափանիշներով պետք է իրականացվի մշակութային կազմակերպությունների կառավարման որակի գնահատում»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ 2021 թվականին թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 773,9 մլն դրամ, միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթ է եղել 264 հազար դրամի չափով:

ԿԳՄՍ նախարարը հայտնել է, որ թատրոնների եւ համերգասրահների ենթակառուցվածքների բարելավման համար 2022 թվականին հատկացվել են 1 միլիարդ 284 միլիոն դրամի չափով միջոցներ: Մշակութային հաստատությունների պայմանների բարելավումը բարձրացրել է նաեւ հանրությանը մատուցվող ծառայությունների որակը, եւ հաստատությունների 90 %-ը գրանցել է սեփական եկամուտների աճ՝ 2019 թվականի համեմատ:

«Ֆինանսավորման փորձնական մոդելի շրջանակում յուրաքանչյուր տարի թատերահամերգային կազմակերպությանը կտրամադրվի իր կողմից կանխատեսվող սեփական եկամուտների կրկնապատիկի չափով գումար: Այդ գումարը կարող է օգտագործվել պահպանման ծախսերի, աշխատակիցների վարձատրության բարձրացման, նոր, վերափոխված ներկայացումների բեմադրության, հյուրախաղերի անհրաժեշտ կապիտալ ծախսերի համար»,- ասել է նախարարը՝ տեղեկացնելով, որ այս տարի ֆինանսավորման փորձնական մոդելը կներդրվի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

ԿԳՄՍ նախարարի խոսքով՝ 2022 թվականին թատրոնի տոմսերի վաճառքից գեներացված սեփական եկամուտները կազմել են 614,4 մլն դրամ. սա միայն տոմսերի վաճառքի գումարն է, քանի որ ընդհանուր արտաբյուջեն թատրոնի համար կազմել է ավելի քան 749 մլն դրամ, այսինքն՝թատրոնը, 2019 թվականի համեմատ, ավելի քան կրկնապատկել է իր սեփական եկամուտների ծավալը:

Ըստ նախարարի՝ 2023 թվականի համար թատրոնը կանխատեսել է, որ կգրանցի շուրջ 841 մլն դրամի սեփական եկամուտ: Այս տարի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը 1.4 մլրդ դրամի ֆինանսավորում է ստացել: «Կանխատեսվող սեփական եկամուտների չափը հաշվի առնելով՝ թատրոնի ընդհանուր ֆինանսավորումը պետք է կազմեր 1.68 մլրդ դրամ, եւ այդ պարագայում փորձնական մոդելի ներդրման շրջանակում թատրոնին հավելյալ տրամադրում ենք 233.5 մլն դրամ»,- տեղեկացրել է Ժաննա Անդրեասյանը՝հավելելով, որ այդ միջոցների շրջանակում թատրոնը պետք է բեմադրի առնվազն 2 նոր ներկայացում՝ հրավիրելով նաեւ արտերկրի մասնագետների:

Ֆինանսավորման նոր մոդելի արդարացման դեպքում մինչեւ 2026 թվականն այն կներդրվի ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող բոլոր 21 թատերահամերգային կազմակերպություններում:

Նախարարն ընդգծել է՝ առաջարկվող մոտեցումը բխում է ՀՀ մշակույթի պահպանության եւ տարածման եւ հանրահռչակման ռազմավարությունից, որտեղ առանձնակի կարեւորվում է մշակութային եւ ստեղծարար ոլորտների արդիականացումը:

Կառավարության նիստում հարցի վերաբերյալ ծավալվել է քննարկում: Կարեւորելով նախագիծը՝ վարչապետը շեշտել է, որ մշակութային հաստատությունների զարգացումը ռազմավարական ուղղություն է:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՄԱԼՈՒԽՆԵՐ՝ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԿԱՊՈՒՂԻՆԵՐՈՎ

Երեւանյան 28 փողոցներում վերգետնյա մալուխները կանցկացվեն ստորգետնյա կապուղիներով. կփորվի շուրջ 80 կմ խրամուղի: Ըստ նախագծի՝ «Երքաղլույս»-ի հենասյուներով անցնող հաղորդալարեր այլեւս չեն լինի:

Երեւանի քաղաքապետարանից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ քաղաքային լուսավորության ծրագիրը համայնքն իրականացնում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ համատեղ՝ վարկային ու դրամաշնորհային միջոցներով: Վարկի գումարը 4.0 մլն ԱՄՆ դոլար է, դրամաշնորհը՝ 1.9 մլն եվրո:

Ամիրյան փողոցում աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են: Գործընթացն այս պահին իրականացվում է Մյասնիկյան պողոտայում եւ Աճառյան փողոցում: Աշխատանքների հաջորդ կանգառը Թումանյան փողոցն է:

Նախագիծը ներառում է նաեւ հենասյուների ու նատրիումային եւ սնդիկային լամպերի փոխարինում ԼԷԴ լուսատուներով, ինչպես նաեւ լուսավորության ցանցի կառավարման համակարգի ներդնում: Ծրագրի հիմնական նպատակը Երեւանում անվտանգ ու էներգախնայող արտաքին լուսավորության ցանց ստեղծելն է:

ՕՆԼԱՅՆ ՀԵՐԹԱԳՐՈՒՄ՝ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆՆԵՐՈՒՄ

Հուլիսի 17-ից բոլոր անձնագրային կետերում հերթագրումը կլինի օնլայն համակարգով: Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունների հարթակը՝ migration.e-gov.am-ը, ներդրվել է դեռեւս միայն Երեւանի տարածքում: Մարզերում համակարգը կակտիվանա աստիճանաբար:

«Ժողովուրդ» օրաթերթը եղել է Դավթաշեն վարչական շրջանի անձնագրային կետում եւ խոսել քաղաքացիների հետ՝ հասկանալու համար, թե ինչպիսի կարծիք ունեն ներդրված համակարգի վերաբերյալ:

Խոսել ենք նաեւ Ներքին գործերի նախարարության եւ քաղաքացիության ծառայության հանրային կապերի պատասխանատու Նելլի Դավթյանի հետ: Նրա խոսքով՝այս համակարգը կար դեռեւս անցած տարվանից: «Երեւանում աստիճանաբար այս հերթերին զուգահեռ ներդրվեց էլեկտրոնային հերթագրման համակարգը, որը գործում էր անձնագրային եւ վիզաների վարչության գլխամասային գրասենյակում դեռեւս անցած տարվա հոկտեմբերից, մասնավորապես՝ անձնագրային եւ վիզաների բաժնում»,- ասաց Դավթյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 6-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՎԱՃԱՌՔԸ ԿԱՐԳԵԼՎԻ

Հուլիսի 13-ին ԱԺ արտահերթ նստաշրջանում երկրորդ ընթերցմամբ քննարկվել է ««Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը եւ կից օրենքների նախագծերի փաթեթը:

Հիմնական զեկուցող, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, օրենսդրական նախաձեռնության հեղինակ Սիսակ Գաբրիելյանը նշել է, որ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում կատարվել են մի շարք փոփոխություններ: Մասնավորապես, կարգելվի հրավառությունների ներմուծումը՝ բացառությամբ պետական կամ համայնքային նշանակության տոների կամ պետական կամ համայնքային մասնակցության միջոցառումների ընթացքում: Նախատեսվում են նաեւ տուգանքներ՝ ներմուծման հետ կապված պահանջները խախտելու դեպքերում: Կարգելվի 16 տարին չլրացած անձանց բոլոր դասերի հրագործական արտադրատեսակի վաճառքը:

Հարակից զեկուցող, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ծովինար Վարդանյանը նշել է, որ օրենսդրական փաթեթը քննարկվել է հանձնաժողովում եւ ստացել դրական եզրակացություն: Նա կոչ է արել գործընկերներին կողմ քվեարկել:

Հարակից զեկուցող, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Դավիթ Համբարյանը տեղեկացրել է, որ առաջինից երկրորդ ընթերցման ժամանակահատվածում Կառավարությունը ներկայացրել է առաջարկներ, որոնք ընդունվել են:

ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանն իր ելույթում նշել է, որ նախագծի ընդունումից հետո հանրության շահը վեր է դասվելու մասնավորի շահից: Նա նաեւ նշել է, որ ընդունվող սահմանափակումները հնարավորություն կտան չխախտել քաղաքացիների հանգիստը, կանխել մանկահասակ երեխաների խեղումները, ինչպես նաեւ կանխարգելել տեխնածին աղետները:

Օրենսդրական նախաձեռնությունն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ:

ՈՒՆԵՆՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Հայաստանն ունի շատ լավ հնարավորություն առաջին հինգ ամսվա ցուցանիշներով 2023 թվականին նույնպես ապահովել բարձր տնտեսական աճ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանն այս մասին հայտարարեց Կառավարության նիստի ժամանակ:

«Ունենք շատ լավ հնարավորություն առաջիկա հինգ ամսվա ցուցանիշներով 2023 թվականին նույնպես ապահովել բարձր տնտեսական աճ:

Այս առումով ուզում եմ ուշադրություն հրավիրել կապիտալ ծախսերի իրականացման մեր տեմպին ու որակին: Ծախսերի մասին խոսելիս երբեք չպետք է մոռանալ որակի մասին, որովհետեւ ծախսն առանց որակի միջոցների վատնում է. դա պետք է բացառել»,- ասաց նա:

ՆԵՐԴՐՈՒՄ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Մեր կառավարության եւ՝ 2018, եւ՝ 2021 թվականի ծրագրում հատուկ տեղ է տրվում արժեթղթերի շուկայի զարգացմանը, եւ ուրախ եմ արձանագրել, որ մենք այդ ճանապարհին քայլեր ենք արել՝ օրենսդրական որոշ փոփոխություններ»,- Կառավարության նիստին հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Կառավարության նախորդ նիստում մենք որոշում կայացրինք, որ աջակցություն կցուցաբերենք այն ընկերություններին, որոնք կգնան ցուցակման, բաց բաժնետիրացման, այսինքն՝ բաժնետոմսեր եւ պարտատոմսեր բորսայում թողարկելու ճանապարհով, երբ որ ընկերություններն իրենց որոշակի մասնաբաժինը բորսայում հանում են վաճառքի, այսինքն՝ հնարավորություն են տալիս, որպեսզի քաղաքացիները, կազմակերպությունները կամ պարտատոմսեր ձեռք բերեն, կամ բաժնետոմսեր ձեռք բերեն»,- ասաց Փաշինյանը:

Վարչապետը նշեց, որ աջակցության որոշակի մեխանիզմ է ստեղծվել: «Մասնավորապես, պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման եւ բորսայում ցուցակման համար տեղաբաշխման անվանական ծավալի 2 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 30 մլն դրամը, մենք օժանդակություն ենք տրամադրում ընկերություններին մի կետով՝ պարտատոմսերի շրջանառության համար տեղաբաշխման անվանական ծավալի 3-ական տոկոսի չափով 1-ին 3 տարիների համար, բայց ոչ ավել, քան 45 մլն դրամի օժանդակություն՝ շրջանառության յուրաքանչյուր 12 ամսի համար: Բաժնետոմսերի թողարկման համար փաստացի կատարման ծախսերի 80 տոկոսի չափով օժանդակություն արտաքին աուդիտի բանկային եւ բորսայական ծառայությունների ծախսերը կապված թողարկման, տեղաբաշխման եւ բորսայում ցուցակման հետ փոխհատուցելու կամ օժանդակելու համար, միջազգային վարկանիշային գործակալություններից վարկանիշի ստացման եւ սպասարկման առաջին տարվա ծախսերի 50 տոկոսի չափով սուբսիդավորում, սակայն ՀՀ-ում գործունեություն իրականացնող ֆոնդային բորսայում ցուցակման դեպքում՝ 1-ին տարվա ծախսերի մինչեւ 80 տոկոսի չափով սուբսիդավորում, 30 տոկոս՝ ի հավելումն նախորդ 50 տոկոսի, եթե պահպանվել են պարտատոմսերի վերաբերյալ նախագծով նախատեսված պահանջները: Ահա, ցուցակման գնացող ընկերությունների համար Կառավարության նախորդ նիստում այսպիսի օժանդակության փաթեթ էինք ընդունել»,- ասաց նա:

«2018 թվականի եւ հետագա մեր քննարկումներում առանցքային տեղ է զբաղեցնում այն, որ արժեթղթերի շուկայի զարգացումը կարող է դառնալ այն նոր կոմպոնենտը, որը ոչ միայն տնտեսական զարգացման նոր խթան կդառնա, այլեւ մարդկանց սոցիալական եւ տնտեսական ակտիվության եւ սոցիալական պաշտպանվածության նոր մեխանիզմ կդառնա»,- նշեց Փաշինյանը:

Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը նշեց, որ Կառավարությունը եւ Ֆինանսների նախարարությունը կապիտալ շուկայի զարգացման մեջ էական դեր են խաղում այն իմաստով, որ պետական գանձապետական պարտատոմսերի լիկվիդայնությունը եւ նրանց շուկայի զարգացումը էական ազդեցություն են ունենում, եւ շուկա է ձեւավորվում: «Նույն վարկանշային կազմակերպություններն ուղղորդվում են սուվերեն վարկանիշով, եւ մեր պարտատոմսերի գնանշումները հետագայում ուղենիշ են հանդիսանում մասնավոր ընկերությունների համար: Այստեղ պետք է մեծ ուրախությամբ նշեմ, որ մեր պարտատոմսերի նկատմամբ հետաքրքրությունը վերջին ամիսներին էականորեն փոխվել է, եւ մենք ունենք մեծ հետաքրքրություն աշխարհի խոշորագույն ներդրումային կազմակերպությունների եւ բանկերի կողմից, ովքեր մեծ ցանկություն ունեն ներդրում կատարել պետական գանձապետական պարտատոմսերով՝ դրամով գնանշված»,- ասաց նա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Սպայկա» ՍՊԸ-ի՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ալափարս գյուղի վարչական տարածքում 66.1 հա հողատարածքի ոռոգման համար ստորերկրյա ջրային ռեսուրսից 15.0 լ/վ նոր ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից -18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն,(տարեթիվը,ամիսը,ամսաթիվը) 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Սպայկա» ՍՊԸ-ի՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ գյուղի վարչական տարածքում արդյունաբերական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 16.0 լ/վ նոր ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից-18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, (տարեթիվը,ամիսը,ամսաթիվը) 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍՊՈՐՏԻ ԵՏՆԱԲԵՄԻՑ»

ԿՐԱԿՈՑԻ ՆՄԱՆՎՈՂ ՀԱՐՎԱԾՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը «Սպորտի ետնաբեմից» խորագրով շարքի շրջանակներում հերթական մանրամասներն է հաղորդում այս անգամ արդեն բռնցքամարտի Եվրոպայի փոխչեմպիոն Ռաֆայել Հովհաննիսյանի հետ զրույցից:

Խոսել ենք մարզիկի՝ բռնցքամարտում հայտնվելու հետաքրքիր պատմության, սպորտային սեփական գաղտնիքների, հիշողությունների ու անձնական կյանքի մասին:

-Ռաֆայել, կուզեմ սկսենք Ձեր կարիերայի սկզբից: Դուք հայտնվել եք բռնցքամարտում շատ զարմանալի ձեւով՝ Ձեր մայրիկի շնորհիվ, որը, Ձեր կամքին հակառակ, տարել է Ձեզ սպորտի: Հետո արդեն Դուք հրաժարվել եք մարզվել: Ինչու՞:

-Առաջին անգամ բռնցքամարտի հաճախել եմ 5-6-րդ դասարաններում, բայց չէի ցանկանում: Այդ ժամանակ հենց մայրս որոշեց, որ պիտի գնամ: Ընդհանրապես չէի ուզում, չգիտեմ՝ ինչու: Հետո մայրս հասկացավ դա, եւ իմ կամքով դուրս եկա: Անցավ 3-4 տարի, եւ այնպես ստացվեց, որ իմ՝ այդ ժամանակվա մարզիչը այցելեց դպրոց, ասաց, որ խմբակ ունի: Այդ ժամանակ եւս այնպես չէր, որ մեծ ցանկություն ունեի, բայց խիզախեցի, ու հենց այդտեղից էլ սկսվեց ամեն ինչ: Իհարկե, մի քանի անհաջողություններ ունեցա հենց սկզբում, բայց, փառք Աստծո, հետագայում ամեն ինչ շատ լավ դասավորվեց:

-Սպորտն ու դատարանը նման են իրար. երբեք չի լինում միշտ հաղթել: Ձեր պարտությունները ինչպե՞ս է ընդունում Ձեր մայրը:

-Ունեցա երկու պարտություն իմ առաջնային մարտերում, ասաց, որ եթե այսպես շարունակվի, ինքը չի ուզենա՝ շարունակեմ: Տարիներ անց Երեւանի առաջնությանը դարձա չեմպիոն, բայց Հայաստանի առաջնությանը պարտվեցի: Դա կարծես հույս ներշնչեց: Ասաց՝ լավ, հուսանք՝ մի բան կլինի, եւ ստացվեց այնպես, որ իր այդպես ասելուց հետո՝ 2017 թվականից մինչ այսօր, չեմպիոն եմ դարձել Հայաստանի: Իհարկե, ընթացքում այլ պարտություններ գրանցել եմ՝ երկրից դուրս էլ, Հայաստանում էլ, բայց մայրս չի դիտում ո՛չ իմ հաղթանակած, ո՛չ էլ պարտված մենամարտերը:

-Մի անգամ, երբ խոսում էինք, ասացիք, որ ունեք մի նշանաբան կամ հետաքրքիր տողեր, որ ասում եք ամեն անգամ ռինգ մտնելուց առաջ: Արդյոք այս ընթացքում խմբագրե՞լ եք այդ տողերը. Կխնդրեմ նախ բացատրեք այդ տողերի ընտրությունը եւ ինչեցնեք եթերում:

-Ի սկբանե այդ տողերը տեսել եմ սոցցանցում՝ Facebook-ում. «Հաջողությունը վերջնական չէ, պարտությունը ճակատագրական չէ: Քաջություն ունեցիր շարունակելու: Ահա թե ինչն է ամենից կարեւոր»: Սա աչքովս էր ընկել այն ժամանակ, երբ ընդհամենը 10 օր առաջ պարտություն էի կրել, եւ հասկացա, որ այս ամենի մեջ իսկապես շատ խորը միտք կա: Այդ քառատողում գրված է թե՛ հաղթողի, թե՛ պարտվողի եւ թե՛ այն մարդու մասին, ով եւ՛ հաղթանակի, եւ՛ պարտության դեպքում ինչ պիտի անի: Ոչ միայն սպորտում, այլ կյանքի կարգախոս է, քանի որ խոսքը հզոր է, միտքը՝ առավել եւս:

-Հիմա, երբ արտաբերեցիք կախարդական խոսքերը, ի՞նչ զգացողություն ապրեցիք, ուժեղացա՞ք:

-Չէի ասի, բայց մրցումային փուլից, ռինգ մտնելուց առաջ ինձ իսկապես ուժ է տալիս: Ես հասկանում եմ, թե ինչի համար եմ պայքարելու:

-Միանշանակ ռինգում գտնվելիս, բացի ֆիզիկական պատրաստվածությունից, կարեւոր է նաեւ հոգեբանական կայուն վիճակը կամ հավատը սեփական ուժերի նկատմամբ: Ե՞րբ առաջին անգամ հասկացաք, որ ինքներդ Ձեզ հավատում ու վստահում եք:

-Վստահություն միշտ եղել է, լարվածությունը՝ նույնպես: Եթե հիշենք դեպք, երբ ես ամենաշատն եմ վստահ եղել իմ ուժերի վրա, ու լարվածությունը քիչ էր, դա Հայաստանում տեղի ունեցած Եվրոպայի առաջնության ժամանակ էր՝ քառորդ եզրափակչում, երբ մրցում էի Բելգիան ներկայացնող մարզիկի հետ: Հասկացա, որ եթե դու վստահ ես, կարեւոր չէ, թե ով է քո դիմաց կանգնած:

Հարցազրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ից ամերիկյան «Ինտեր Մայամի» տեղափոխված աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսին ավարտված մրցաշրջանի արդյունքում ճանաչվել է աշխարհի լավագույն ֆուտբոլիստ՝ ամերիկյան Excellence in Sports Performance Yearly Award (ESPY) մրցանակաբաշխության վարկածով:

Մեսիի շնորհանդեսը «Ինտեր Մայամիում» տեղի կունենա հուլիսի 16-ին:

Տարվա լավագույն մարզիկ է ճանաչվել ամերիկյան ֆուտբոլի «Կանզաս Սիթի Չիֆս» թիմի քուոթերբեք Պատրիկ Մահոումը:

ՖԵԼԻՇԻՆ՝ ՄԲԱՊԵԻ ՀԱՄԱՐՈՎ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ն բանակցում է Մադրիդի «Աթլետիկոյի» 23-ամյա հարձակվող Ժոաու Ֆելիշի հետ: Փարիզյան ակումբը համաձայնել է 24-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեի խաղային համարը (7) փոխանցել պորտուգալացի ֆուտբոլիստին, որը բանակցության ժամանակ արծարծել է նաեւ այս հարցը. հաղորդում է DefencaCentral-ը:

Մբապեն հրաժարվել է երկարաձգել պայմանագիրը ՊՍԺ-ի հետ եւ 2024թ. հունիսին կստանա ազատ գործակալի կարգավիճակ:

Այս տարվա ձմռանը Ժոաու Ֆելիշին վարձակալել էր Լոնդոնի «Չելսին»: Անցած մրցաշրջանում նա մասնակցել է 40 հանդիպման, խփել է 9 գոլ, կատարել 3 գոլային փոխանցում:

ԽԱՉԱՆՈՎԸ ՀԱՅՐ Է ԴԱՐՁԵԼ

Աշխարհի 11-րդ ռակետ, 2020թ. օլիմպիական փոխչեմպիոն Կարեն Խաչանովի ընտանիքում ծնվել է երկրորդ որդին:

«12.07.2023: Բարի գալուստ աշխարհ, իմ երկրորդ զավակ՝ Միքայել»,- սոցիալական ցանցերում գրել է հայ թենիսիստը՝ հրապարակելով լուսանկար:

Խաչանովի առաջնեկը ծնվել է 2019թ. սեպտեմբերին, նրա անունը Դավիթ է:

ՎՈԼԵՅԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանի «Գազպրոմ Արմենիա» ուսումնական-մարզական համալիրում հուլիսի 21-23-ը ՀՀ կառավարության հովանու ներքո կանցկացվի վոլեյբոլի տղամարդկանց Եվրոպայի մինչեւ 22 տարեկանների առաջնության ենթախմբային մրցաշարը:

Հայաստանի հավաքականի մրցակիցները կլինեն Ֆրանսիայի, Դանիայի եւ Պորտուգալիայի թիմերը: Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Կարեն Ասմարյանի խոսքով՝ սա աննախադեպ իրադարձություն է, որին Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիան, Կառավարության աջակցությամբ, տեւական ժամանակ է՝ նախապատրաստվում էր:

ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՖԻԼՄԸ՝ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Հայոց ցեղասպանության մասին պատմող «Ավրորայի լուսաբացը» անիմացիոն ֆիլմը կցուցադրվի Հյուսիսային Ամերիկայի կինոթատրոններում:

Bars Media Films-ը հայտարարել է Հյուսիսային Ամերիկայի կինոթատրոններում «Ավրորայի լուսաբացը» ժապավենի պրեմիերայի մասին, որը տեղի կունենա օգոստոսի 11-ին Նյու Յորքում՝ Village East-ում, Angelika-ի եւ New Plaza Cinema-ի կողմից, իսկ օգոստոսի 18-ին՝ Լոս Անջելեսում՝ Laemmle Glendale-ում, սեպտեմբերի 1-ին՝ Տորոնտոյում: Պրեմիերաներին անձամբ ներկա կլինի ռեժիսոր Իննա Սահակյանը՝ներկաների հարցերին պատասխանելու:

Ֆիլմը օգոստոսին եւ աշնանը կցուցադրվի նաեւ ԱՄՆ-ի եւ Կանադայի այլ քաղաքներում:

Այս գեղարվեստական ֆիլմը Հայաստանում նկարահանված առաջին անիմացիոն վավերագրական ֆիլմն էր եւ առաջադրվել էր «Օսկարի»: Ֆիլմի պրեմիերան տեղի ունեցավ IAFF 2022-ում եւ դարձավ փառատոնի ֆավորիտ՝ արժանանալով ավելի քան 10 մրցանակների, այդ թվում՝ Asia Pacific Screen Awards 2022 լավագույն անիմացիոն ֆիլմի համար, 2023 թվականի «Ֆիլմեր, որոնք կարեւոր են» հանդիսատեսի մրցանակն ու «Հանդիսատեսի հատուկ հիշատակում» մրցանակը:

«Հայոց ցեղասպանությունն իմ ժողովրդի անսպառ ցավն է»,- ասել է ռեժիսոր Իննա Սահակյանը: «Ես վախենում էի պատմել այնպիսի պատմություններ, որոնք միայն հայերին կներկայացնեն որպես զոհերի ազգ, մինչեւ պատահաբար տեսա Ավրորա Մարդիգանյանի հետ հարցազրույցը, երբ թերթում էի Ջորյան ինստիտուտում Հայոց ցեղասպանությունը վերապրածների արխիվացված հարցազրույցները: Նրա խոսքերն ու արտահայտությունները փայլում էին անհավանական, բայց սովորական հերոսությամբ. այս կինը վերապրել է ցեղասպանությունը, սակայն հրաժարվել է զոհ լինել: Սա այն կերպարն է, որը ես ուզում էի ստեղծել Aurora's Sunrise-ում՝ դիմացկուն, ուժեղ եւ միեւնույն ժամանակ հուզիչ»:

● *Հունիսի 14-ին Երեւանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Տիկնայք եւ պարոնայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՔԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐ

ՀԱՐՑ. Եթե անձը երկքաղաքացի է, ՀՀ զինված ուժերում ծառայելը պարտադի՞ր է:

Գեւորգ Արամյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1 հոդվածի պահանջների համաձայն՝ ՀՀ երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես ՀՀ քաղաքացի, ունի ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները եւ կրում է ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ երկքաղաքացին հանդիսանում է նաեւ Հայաստանի Հանրապետության զինապարտ եւ ենթակա է պարտադիր զինվորական ծառայության Հայաստանի զինված ուժերում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Մարդու իրավունքների պաշտպանը ե՞րբ չի կարող օգնել լուծել հարցերը:

Լիդա Առաքելյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե վիճել եք Ձեր ընկերների, ծնողների, մտերիմների հետ կամ կարծում եք, որ նրանք խախտում են քո իրավունքները, ապա այս դեպքում Պաշտպանը չի կարող օգնել:

ՀՀ ՄԻՊ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամեն դեպքում, կարող եք դիմել Պաշտպանին, եւ մասնագետները Ձեզ խորհուրդ կտան, թե ինչ կարող եք անել, եւ կներկայացնեն, թե ինչ իրավունքներ ունեք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆեյսբուքյան օգտատեր Արշակ Աբրահամյանը հրապարակել է Ստեփանակերտի խանութներում տիրող իրավիճակը փաստող լուսանկարները:

«Ձեզ եմ ներկայացնում այս պահի դրությամբ Ստեփանակերտում գտնվող սննդի կետերում տիրող իրավիճակը»,- կից նշել է նա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+6 + 11 +25 + 28
Կոտայքի լեռներ	+ 5 +10 +24 + 26
Կոտայքի նախալեռներ	+15 + 18 +30 + 32
Գեղարքունիք	+6 + 11 +20 + 24
Լոռի	+7 + 12 +22 + 26
Տավուշ	+12+ 16 +26 + 30
Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 +23 + 25
Արագածոտնի նախալեռներ	+16 + 19 + 29 + 33

Արարատ	+17 + 19 +33 + 35
Արմավիր	+14+ 17 +32 +34
Վայոց ձորի լեռներ	+ 8 +11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+16 + 20 +33 + 36
Սյունիքի հովիտներ	+20 + 23 +30 + 33
Սյունիքի նախալեռներ	+12+ 13 +23 + 27
ԼՂՀ	+16 + 19 +28 + 33
Երեւան	+15 + 17 +32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.7.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*